ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յոթերորդ գումարման առաջին, երկրորդ և արտահերթ նիստերի և նստաշրջանների աշխատանքների մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ոթերորդ գումարման առաջին նստաշրջանի աշխատանքներն սկսվել են 2019 թվականի հունվարի 14-ին և ավարտվել փետրվարի 14-ին: Ազգային ժողովի առաջին նստաշրջանն ընթացել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված օրակարգով: Ըստ այդմ՝ ստեղծվել է յոթերորդ գումարման Ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբ, ընտրվել են Ազգային ժողովի նախագահ, Ազգային ժողովի նախագահի երեք տեղակալներ, մշտական հանձնաժողովների նախագահներ, հավանություն է տրվել Կառավարության ծրագրին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յոթերորդ գումարման Ազգային ժողովի երկրորդ նստաշրջանն սկսվել է մարտի 5-ին և ավարտվել հունիսի 20-ին: Այդ ընթացքում գումարվել է 6 հերթական նիստ, 4 արտահերթ նիստ: Նստաշրջանի ավարտից հետո գումարվել է 4 արտահերթ նստաշրջան (21.06.19-25.06.19, 28.06.19-01.07.19, 01.07.19-01.07.19 և 09.07.19-10.07.19):

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովն ընդունել է 143 օրենք, որոնցից 6-ը «մայր» օրենքներ են, 137-ը՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում, իսկ 11-ը՝ օրենք-

համաձայնագրեր: 80 օրենք ընդունվել է երկրորդ հերթական նստաշրջանի, իսկ 63-ը՝ արտահերթ նստաշրջանների ընթացքում:

Ընդունված օրենքներից 8-ի հեղինակը Ազգային ժողովի պատգամավորներն են, 4-ինը՝ խմբակցությունները, իսկ 131-ի հեղինակը՝ Կառավարությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովն ընտրել է՝

-Բարձրագույն դատական խորհրդի 2 անդամ,

- Սահմանադրական դատարանի մեկ դատավոր,

- ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 7 անդամ,

-ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 5 անդամ:

Լսել և ի գիտություն է ընդունել՝

- Կառավարության 2018 թվականին հավանության արժանացած՝ Կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը,

- «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների մասին» կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հաղորդումը, - «Հայաստանի Հանրապետության դատախազության 2018 թվականի գործունեության մասին» հաղորդումը,

- «2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և

ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը.

- «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ» տարեկան զեկույցը,
- «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2018 թվականի գործունեության մասին» հաղորդումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը (գնաճի հաղորդում),
- Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը:

Ազգային ժողովն ստեղծել է երկու քննիչ հանձնաժողով: Դրանք են՝ Արարատի և Արմավիրի մարզերում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեության արդյունավետությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը և 2016 թվականի ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքները ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յոթերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգ կտեղափոխվի առաջին ընթերցմամբ ընդունված 29 օրենքի նախագիծ: Դրանցից 28-ի հեղինակը Ազգային ժողովի պատգամավորները և խմբակցություններն են, իսկ 1-ը՝

ՀՀ կառավարությունն է: Շրջանառության մեջ է նստաշրջանի օրակարգ դեռևս չընդգրկված 124 օրենքի նախագիծ, որից 54-ի հեղինակը պատգամավորները և խմբակցություններն են, իսկ 70-ը՝ ՀՀ կառավարությունն է: